Արձանագրություն N 2

N «ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-20/1»
Ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27 դեկտեմբերի 2019թ

ժ.10:30

Մասնակցում էին՝

Հայտեր բացող անդամներ՝ Ա. Խաչատրյան /գլխավոր հաշվապահ/

Ք. Խաչատրյան /դեղատան վարիչ/

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բերբերյան /ֆինանսական գծով փոխտնօրեն/

անդամներ՝ Ա. Թումանյան /բուժական գծով փոխտնօրեն/

Ռ. Հովակիմյան /տնտեսվար/

Հանձնաժողովի քարտուղար՝ Հայկանուշ Թովմասյան

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Գնման ընթացակարգի հրավերը 17 դեկեմբերի 2019թ. հրապարակվել է www.armeps.am համակարգում և սահմանված կարգով հրապարակվել է տեղեկագրում:
2. Հայտերի բացումը սահմանված կարգով տեղի է ունեցել 24.12.2019թ. ժամը 12:00-ին www.armeps.am համակարգով:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները
«ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտ են ներկայացրել
2.1 <<ՖԼԵԾ>> ՍՊԸ-ն, ք.Երևան, Եզնիկ Կողբացի 30, հեռ. 010 53-42-33, էլ. փոստ՝ flashltdtender@gmail.com

3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

3.1 <<ՖԼԵԾ>> ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգին ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3.2 Քանի որ «ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի պահանջների համաձայն, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, հանձնաժողովի քարտուղարը մասնակցին ծանուցել է էլեկտրոնային փոստի միջոցով և հրավիրել է բանակցությունների գների նվազեցման նպատակով:

3.3 Բանակցությունների արդյունքում <<ՖԼԵԾ>> ՍՊԸ-ն իր կողմից ներկայացրած գնային առաջարկը չափաբաժին 1-ի համար 1062500 (ներառյալ ԱԱՀ) ՀՀ դրամից նվազեցրել է 1000000 (ներառյալ ԱԱՀ) ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չափաբաժին 1՝ Բենզին, ռեգուլյար

*Գնման գործընթացը կազմակերպվում է ղեկավարվելով "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	Չ/Հ1	Չ/Հ1
<<ՖԼԵԾ>> ՍՊԸ	803333.3	1000000